

тельщики потомственных и личных граждан, купечество, государственных, мулкадарских, тиульских, монастырских, собственнических и других категорий крестьян составляли большинство населения - менее чем 98%.

Согласно с посемейным списком, в 1886 году численность привилегированного слоя составляло 13.608 человек, или 2,03% населения, а по данным переписи 1897 года, это число составило уже 18.386 человек, что было 2,22% населения. Большинство населения, около 98%, по-прежнему являлось налогоплательщиками (почетные и личные граждане, мещане, купечество и крестьянство со своими подслоями).

LAYERS IN POPULATION OF ERIVAN PROVINCE IN THE SECOND HALF OF XIX CENTURY

G. L. KIRAKOSYAN

In second part of XIX century half of the territories occupied by the Russian Empire were in the Erivan province. During The creation of the province in 1850, it was first divided into five, and later seven provinces.

In 1864 the total number of population was 430.716 people, of which 44.402 were citizens. In 1886 the total number was 670.405 people, of which 57.994 were citizens, and in 1897 the number was 829.556 people, of which 81.509 were citizens.

In Russian Empire (obviously, Erivan province included, because it was a part of the empire) population was divided into classes, where some of them were free of taxes and obligations and some were certainly not. In the middle of 1860 the number of people in the tax free class was 12.019 (khans, bags, meliks, the religious class, etc.), which was 2,79% of population. If we avoid the 2.400 villagers in this number, who were also free of taxes and obligations, the number of people in the privileged class would be 9039, which is slightly more then 2% of the population. The taxpayers were the majority of the population - 98%.

According to the family registers, in 1886 the number of people in the privileged class was 13.608, which was 2,03% of the population, and according to census of 1897, that number was 18.386, which was 2.22% of population. The majority of population, around 98%, were still the taxpayers (by inheritance, honorable citizens, tradesmen, merchants and peasants with their subclasses).

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍԸ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԻՆՔՆԱԳՈՐԾՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Գ. Լ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

XIX դարի երկրորդ կեսին Ռուսական կայսրության, բնական է՝ նաև Արևելյան Հայաստանի բնակչությունը շարունակում էր բաժանված մնալ դասերի:

Կապիտալիստական հասարակությունում դասերը, որպես ինքնուրույն միավոր, չեն հետազոտվում, սակայն նրանք, որպես իրականություն, պահպանում են իրենց նշանակությունը հասարակության սոցիալական կառուցվածքի փոփո-

խությունների ուսումնասիրման համար:

Դասը ստրկատիրական, ֆեոդալական հասարակարգերին բնորոշ հասկացություն է, բնորոշ մարդկանց այնպիսի սոցիալական խմբերին, որոնց դրությունը տվյալ հասարակությունում ոչ միայն որոշված է, այլև օրենսդրական ակտերով ամրապնդված:

Դասերն օբյեկտիվ կատեգորիա են, կազմավորված դասակարգերի հիման վրա, ամբողջովին չընդգրկելով այն: Սովորաբար դասերը խիստ կայուն են և հազվադեպ, շատ քիչ չափով են նրանցում տեղաշարժեր կատարվում մեկից մյուսը: Ազնվականը շարունակում է մնալ ազնվական, վաճառականը՝ վաճառական, քաղքենին՝ քաղքենի, գյուղացին՝ գյուղացի՝ անկախ նրանց անհատական հատկանիշներից, սոցիալական դրությունից:

Ինչպես Ռուսական կայսրությունում, այնպես էլ Արևելյան Հայաստանում, բնակչությունը բաժանված էր, նախ և առաջ, երկու անհավասար դասերի՝ արտոնյալների և հարկատուների:

Պատկանելիությունը այս կամ այն դասին համարվում է ժառանգական: Հասարակության արտոնյալ դասերին պատկանում էին ժառանգական ու անձնական ազնվականները, խաները, բեգերը, մելիքները, աղաները, զանազան դավանանքի հոգևորականները և վաճառականությունը: Կազմելով Արևելյան Հայաստանի բնակչության փոքրամասնությունը՝ նշված խմբերն իշխում էին թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական կյանքում:

Արևելյան Հայաստանի միացումից հետո սկզբնական շրջանում ցարական կառավարությունը չէր ձգտում վավերացնել կամ ճանաչել տեղական հողատերերի իրավունքները: Հետագայում այդ քաղաքականությունը փոխվեց: Ցարիզմը, ձգտելով տեղական բնակչության մեջ սոցիալական հենարան ստեղծել, ոչ միայն ճանաչեց նրանց իրավունքները, այլև ընդլայնեց դրանք: Նախ, 40-50-ական թվականներին, ընդունվեց մուլքադարների և թիուլդարների իրավունքը հողի նկատմամբ, իսկ 1866 թվականից նրանց սկսեցին զինվորական և պետական ծառայության ընդունել ռուսական ազնվականությանը հավասար իրավունքներով¹:

Ցարական իշխանությունը, ձգտելով եկեղեցու միջոցով ամրապնդել իր դիրքը Արևելյան և Արևմտյան Հայաստանում, ազդեցության տակ պահել այլ երկրների հպատակության տակ գտնվող հայերին, ոչ միայն պահպանեց եկեղեցու, հոգևորականության արտոնությունները, այլև նրանց շնորհեց որոշակի իրավասություններ, որոնք իրենց արտացոլումը գտան 1836թ. Նիկոլայ 1-ի կողմից վավերացված «Պոլոժենիե» - ում²:

Հայ հոգևորականությունը, «Պոլոժենիե»-ի համաձայն, ազատվում էր մարմնական պատիժներից, հարկերից և զանազան այլ պարտականություններից՝ դառնալով Ռուսական կայսրության արտոնյալ դասերից մեկը: Հոգևորականության սոցիալ-իրավական այդ վիճակը պահպանվել էր մահ XIX դարի 80-90-ական թվականներին:

¹ Полное собрание законов Российской империи, т. XI, с. 321.

² Մանրամասն տես՝ Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, Երևան, 1974, էջ 212-215: **Լեո**, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, **նույնի** Երկերի ժողովածու, հ. IV, Երևան, 1984, էջ 489-493 և այլն:

Արտոնյալների դասում էր մաս մահմեդական հոգևոր դասը, որի թիվը քիչ չէր Արևելյան Հայաստանում: Հրատարակված և արխիվային տվյալները մեզ հնարավորություն են տալիս որոշել նրա թվաքանակը, տեղաբաշխումը և տեսակաբար կշիռն ընդհանուր բնակչության կազմում:

Երևանի նահանգում 1857 թվականին, նահանգապետի հաշվետվության համաձայն, 9447 արտոնյալ դասի ներկայացուցիչներից 4723-ը քրիստոնյա հոգևորականներ էին: Աղաները և մոլլաները հաշվարկված են միասին՝ 2351 մարդ³, բայց, ամեն դեպքում, մահմեդական հոգևորականների դասին պատկանողների քանակը քիչ չի եղել: Մնացածները եղել են մելիքներ, ազնվականներ, խաներ:

1862 թվականին նշված վարչական միավորումում հոգևոր դասի թվաքանակը կազմել է 5247 մարդ⁴, իսկ արտոնյալ դասերի ընդհանուր թվաքանակը՝ 9824 մարդ:

Հոգևոր դասի վերաբերյալ շատ ավելի ամփոփ տվյալներ են պարունակում նահանգի վիճակագրական կոմիտեի 1865 թվականին վերաբերող տվյալները, որոնց համաձայն մոտ 9100 արտոնյալ դասի ներկայացուցիչներից⁵ 4839-ը եղել են այդ դասից: Փաստորեն հոգևոր դասը կազմել է արտոնյալների կեսից ավելին: Ընդ որում, հոգևոր դասի նշված թվաքանակից 3484-ը կամ ընդհանուրի 72%-ը կազմել են հայ լուսավորչականները, որից արական սեռի՝ 1972, իգական՝ 1512 մարդ:

Մահմեդական հոգևորականների ընդհանուր թվաքանակը կազմել է 1223 մարդ (645-ը՝ արական, 578-ը՝ իգական սեռի) կամ ընդհանուրի 25,27%-ը⁶:

Ուղղափառ և հայ կաթոլիկ հոգևոր դասի թվաքանակը փոքր էր՝ համապատասխանաբար 61 և 71 մարդ⁷:

Ընդհանուր առմամբ, հոգևոր դասը կազմել է Երևանի նահանգի բնակչության (437.717 մարդ) մոտ 2%-ը:

Նահանգապետի 1886թ. հաշվետվության համաձայն Երևանի նահանգում կար ընդամենը 90.478 ծուխ՝ 667.464 բնակչությամբ⁸: Ծխերի 2,49%-ը (2250) և բնակչության 2,3%-ը (15,368, որից՝ 8046 տղամարդ) պատկանում էր արտոնյալ դասին: Նշված ծխերի մեծ մասը գտնվում էին գավառներում, իսկ նահանգի հինգ քաղաքներին բաժին էր ընկնում ընդամենը 622-ը⁹: Հետաքրքիր է նշել, որ այդ

³ Сельское хозяйство и аграрные отношения. Сост. П.В. Гугушвили, т. II, Тбилиси, 1950, сс. 662-663.

⁴ Նույն տեղում, էջ 664-665:

⁵ Վաճառականների դասը այս դեպքում չի հաշվառվել, ուստի արտոնյալ դասերի ընդհանուր թվաքանակը նախորդ ժամանակաշրջանի համեմատ նվազել է:

⁶ Сборник статистических сведений о Кавказе, т. I, Тифлис, 1869, сс. 8-9.

⁷ Նույն տեղում:

⁸ Российский Государственный Исторический Архив в С.Петербурге, ф. 1284, оп. 223, л. 214, л. 2. (այսուհետ՝ РГИА СПб).

⁹ Ըստ «Обзор Эриванской губернии за 1886 г.» աղբյուրի տվյալների հիման վրա Ա. Համբարյանի կատարած հաշվարկների: Տե՛ս նրա «Արևելյան Հայաստանի արտոնյալ դասի թվաքա-

Ժամանակ երևանում հաշվարկվել է ընդամենը 46 հոգևորական¹⁰:

Արևելյան Հայաստանի շրջաններից Երևանի նահանգում, 1886թ. ընտանեկան ցուցակագրության տվյալներով, եղել են ընդամենը 7707 հոգևոր դասին պատկանողներ, որոնցից արական սեռի՝ 4172-ը, իգական՝ 3535¹¹:

Հոգևոր դասի ընդհանուր թվաքանակում ճնշող մեծամասնություն են կազմել հայ Գրիգորյանները՝ 6741 (3677 տղամարդ և 3064 կին)¹²:

Հայ կաթոլիկները կազմել են փոքրամասնություն՝ 56 տղամարդ և 41 կին, ընդամենը՝ 97 մարդ: Փոքրաթիվ էր նաև ուղղափառ հոգևոր դասը՝ ընդամենը 59 մարդ (38 տղամարդ և 21 կին): Մնացած հոգևորականները պատկանում էին մահմեդական շիա (691 մարդ) և սյունի (19 մարդ) դավանանքներին, ընդամենը՝ 710 մարդ:

Հայ Գրիգորյանները կազմում էին Երևանի նահանգի բնակչության 1,02%-ը, հայ կաթոլիկ ու ուղղափառ հոգևոր դասը՝ 0,01%-ը: Մի փոքր ավելի էր մահմեդական հոգևոր դասի տեսակարար կշիռը, որը հավասար էր 0,1%-ի: Ընդհանուր առմամբ, բոլոր դավանանքների հոգևոր դասը կազմում էր Երևանի նահանգի բնակչության 1,15 %-ը:

Երևանի նահանգի հոգևոր դասի 26,17%-ը բնակվում էր Ալեքսանդրապոլի, 21,38%-ը՝ Էջմիածնի գավառներում: Երևանի գավառում բնակվում էր 18,65%-ը: Բազմաքանակ էր նաև Նախիջևանի գավառի հոգևոր դասը՝ 12,20%: Նահանգի մնացած՝ Նոր Բայազետի, Սուրմալուի և Շարուր-Ղարալագյազի հոգևոր դասի ներկայացուցիչները համեմատաբար փոքրաթիվ էին: Նրանց բաժին էր ընկնում համապատասխանաբար 8,54, 7,05 և 6,01%-ը¹³:

Հոգևոր դասը զգալի թիվ էր կազմում Արևելյան Հայաստանի այլ շրջաններում ևս: Դարձյալ, ըստ 1886թ. ընտանեկան ցուցակագրության, Շուշիի գավառում նրանց թվաքանակը հասնում էր 2461-ի, որից իգական սեռին պատկանում էր 1024-ը: Բավական փոքրաթիվ էր մահմեդական հոգևոր դասը՝ ընդամենը 390 մարդ: Մնացած 2071-ը հայ Գրիգորյաններն էին, որոնք կազմում էին Շուշիի գավառի բնակչության 1,64%-ը, իսկ մահմեդական շիա դավանանքին պատկանող հոգևոր դասը՝ 0,31%, միասին՝ 1,95%¹⁴:

Բորչալուի գավառի հոգևոր դասի ընդհանուր թիվը հավասար էր 1065-ի, որից արական սեռի՝ 576, իգական՝ 489 մարդ: Այս գավառի հոգևոր դասի կազ-

նակն ու ազգային կազմը XIX դարի երկրորդ կեսին»։ – Լրաբեր հասարակական գիտությունների, 1982, թիվ 6, էջ 46: Տե՛ս նաև *Կիրակոսյան Գ. Լ.*, Արտոնյալ դասերը Արևելյան Հայաստանի բնակչության կազմում (XIX դ. 80-90-ական թվականներ): ԼՀԳ, 1986, թիվ 11, էջ 36-45:

¹⁰ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 125, ց. 1, գ. 25, թ. 33:

¹¹ Свод статистических данных о населении Закавказского края, извлеченные из посемейных списков, 1886 г. Тифлис, 1893 г. (Աղբյուրը էջադրված չէ):

¹² 1886 թ. ընտանեկան ցուցակագրության ժամանակ հայ հոգևոր դասին պատկանող կանանց թիվը նշված է 3164, որը սխալ է: Տե՛ս նշված աղբյուրի «Свод населения по городам и уездам Эриванской губернии» բաժինը:

¹³ Հաշվարկները կատարված են վերոհիշյալ աղբյուրի տվյալների հիման վրա:

¹⁴ Հաշվարկները կատարվել են նշված աղբյուրի «Свод населения по городам и уездам Элисаветпольской губернии» բաժնի տվյալների հիման վրա:

մը ըստ դավանանքի ավելի բազմազան էր: Գերակշռում էր հայ հոգևոր դասը՝ 570 մարդ (47 հայ կաթոլիկներ): Երկրորդ տեղը (377 մարդ) գրավում էին ուղղափառները: Մահմեդական հոգևոր դասը փոքրաթիվ էր:

Հայ Գրիգորյան հոգևոր դասը կազմում էր Բորչալուի գավառի բնակչության 0,52, հայ կաթոլիկները՝ 0,05%-ը, ուղղափառները՝ 0,38%-ը: Սյունի և շիա դավանանքի մահմեդական հոգևոր դասերը կազմում էին գավառի բնակչության 0,1%-ից քիչ ավելին: Ընդհանուր առմամբ, հոգևոր դասը կազմում էր Բորչալուի բնակչության 1,05%-ը:

Ախալքալաքի գավառում հոգևոր դասի ընդհանուր թվաքանակը հավասար էր 1218 մարդու (639-ը՝ արական, 579-ը՝ իգական սեռի): Հայ Գրիգորյանները կազմում էին ընդհանուրի 76%-ը՝ 921 մարդ: Հայ կաթոլիկների թվաքանակը աննշան էր՝ 110 մարդ, որը կազմում էր ընդհանուրի 9,06%-ը: Փոքրաթիվ էր նաև ուղղափառների քանակը՝ 104 մարդ (8,54%): Մահմեդական հոգևոր դասին պատկանում էին ընդամենը 83-ը (6,8%)¹⁵:

Ձանգեզուրի գավառի հոգևոր դասի ընդհանուր թիվը հավասար էր 1831-ի, որից 806-ը՝ իգական սեռի: Հոգևոր դասի մեծ մասը՝ 1583 մարդ, կազմում էին հայ Գրիգորյանները, մնացած 248-ը պատկանում էին մահմեդական շիա և սյունի դավանանքներին: Հայ հոգևոր դասը կազմում էր գավառի բնակչության 1,28%-ը, սյունիները՝ 0,05%-ը, իսկ շիաները՝ 0,15%-ը, միասին՝ 1,48%-ը:

Ղազախի գավառում, կրկին ըստ 1886թ. ընտանեկան ցուցակագրության տվյալների, կար հոգևոր դասին պատկանող 935 մարդ (517-ը՝ արական, 418-ը՝ իգական սեռի), որից 459-ը հայ Գրիգորյաններ էին և կազմում էին բնակչության 0,54%-ը: Շիա հոգևոր դասը կազմում էր բնակչության 0,24, սյունիները՝ 0,32%-ը, իսկ ամբողջ դասը՝ 1,1%-ը¹⁶:

Արևելյան Հայաստանի շրջաններից Կարսի մարզի հոգևոր դասի թվակազմի վերաբերյալ 80-ական թվականներին տեղեկություններ չկան: Պետք է ենթադրել, որ մարզի հոգևոր դասն էլ բնակչության նկատմամբ ունեցել է մոտավորապես այն տոկոսային հարաբերությունը, ինչ Արևելյան Հայաստանի մյուս շրջաններում, այսինքն՝ տատանվել է 1,1-ից (Բորչալուի գավառում) մինչև 1,95%-ի սահմաններում (Շուշիի գավառում):

Ամփոփելով վերոհիշյալ տվյալները, նկատում ենք, որ հոգևոր դասի ընդհանուր թվաքանակը Արևելյան Հայաստանում XIX դարի 80-ական թթ. (առանց Կարսի մարզի) հասնում էր 15.217 մարդու, որից 11.477-ը՝ հայ Գրիգորյաններ: Հոգևոր դասը կազմում էր բնակչության 1,13%-ը (տե՛ս աղյուսակ թիվ 1):

Ամբողջ Անդրկովկասում, Սևծովյան օկրուգում և Դաղստանի մարզում հայ հոգևոր դասի թիվը հասնում էր 17.700-ի (կաթոլիկներ՝ ընդամենը 466-ը), ուղղափառներից հետո, բացարձակ թվաքանակով, գրավելով երկրորդ տեղը:

Ռուսական առաջին մարդահամարի նյութերը հնարավորություն են տալիս քննարկել հոգևոր դասի թվակազմի փոփոխությունները XIX դարի 90-ական թվականների վերջին:

¹⁵ Հաշվարկները կատարվել են նշված աղբյուրի “Свод населения по городам и уездам Тифлисской губернии” բաժնի տվյալների հիման վրա:

¹⁶ Հաշվարկները կատարվել են նշված աղբյուրի “Свод населения по городам и уездам Элисаветпольской губернии” բաժնի տվյալների հիման վրա:

Վարչական միավորները	1886թ.		
	բնակչ.	հոգևոր դաս	%
Երևանի գավառ	113.614	1.419	1,25
Ալեքսանդրապոլի գավառ	135.731	1.991	1,47
Նոր Բայազետի գավառ	103.611	650	1,62
Էջմիածնի գավառ	100.591	1.626	1,62
Նախիջևանի գավառ	84.020	928	1,10
Սուրմալուի գավառ	71.066	636	1,75
Շ. Դարալագյազի գավառ	61.772	457	1,74
Ընդ. Երևանի նահանգ	670.405	7.707	1,15
Կարսի օկրուգ	76.917	-	-
Արդահանի օկրուգ	43.643	-	-
Կադզվանի օկրուգ	34.158	-	-
Օլթիի օկրուգ	19.326	-	-
Ընդ. Կարսի մարզ	174.044	-	-
Զանգեզուրի գավառ	123.997	1.831	1,48
Ղազախի գավառ	85.050	935	1,10
Շուշիի գավառ	126.263	2.461	1,95
Ախալքալաքի գավառ	63.799	1.218	1.83
Բուրջալուի գավառ	101.847	1.065	1,05
Ընդ. Արևել. Հայաստանում	1.345.405	15.217	1,13*

* Հաշվարկը կատարված է առանց Կարսի մարզի բնակչության:

Երևանի նահանգում 1897թ. եղել է քրիստոնյա հոգևոր դասին պատկանող 6531 մարդ, որից քաղաքներում բնակվել են 1078-ը¹⁸: Նշված թվաքանակից 3.422-ը եղել են արական սեռի, 3.109-ը՝ իգական¹⁹: Ինչպես 80-ական, այնպես էլ 90-ական թվականներին հոգևոր դասը մեծաթիվ էր Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառներում, որտեղ բնակվում էին ընդհանուրի 24,07 և 22,63%-ը, Երևանի գավառում՝ 18,50%-ը: Նոր Բայազետի գավառին բաժին էր ընկնում ընդհանուրի 12,04, իսկ Նախիջևանին 10,98%-ը: Համեմատաբար սակավաթիվ էր Սուրմալուի և Շարուր-Դարալագյազի հոգևոր դասը (6,92 և 4,87%)²⁰:

Եղած վիճակագրական նյութերը հնարավորություն չեն տալիս պարզել մահմեդական և այլ հոգևոր դասի թիվն ըստ գավառների, սակայն նահանգում նրանց թվաքանակը կազմել է 1032 մարդ²¹:

Այսպիսով, Երևանի նահանգի հոգևոր դասի ընդհանուր թիվը կազմում է 7563

¹⁷ Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրների տվյալների հիման վրա. РГИА, ф. СПб, 1284, оп. 223, л. 214, лл. 2-4, Свод статистических данных о населении Закавказского края ... Тифлис, 1893г., Кавказский календарь на 1887г., Тифлис, 1886г.

¹⁸ «Первая всеобщая перепись населения Российской империи, 1897 г., (այսուհետ՝ ПВПНРИ), LXXI, Эриванская губерния», СПб, 1905, с. 2.

¹⁹ Նույն տեղում, էջ 30:

²⁰ Հաշվարկները կատարված են վերոհիշյալ աղբյուրի տվյալների հիման վրա:

²¹ ПВПНРИ, Общий свод по империи результатов разработки данных первой всероссийской

մարդ²² կամ բնակչության 0,91%-ը: Դարի 80-ական թվականների հետ համեմատած, հոգևոր դասը ոչ միայն չի աճել, այլև նվազել է բացարձակ քանակով (44 մարդ), հետևապես նաև բնակչության նկատմամբ ունեցած տոկոսային հարաբերությամբ (0,22%):

Կարսի մարզի քրիստոնյա հոգևոր դասը կազմել է 1332 մարդ, որից արական սեռին պատկանում էին 733-ը, իգականին՝ 599²³: Նշված թվաքանակից 235-ը (17,64%) բնակվում էր մարզի քաղաքներում, 1097-ը (82,36%)՝ օկրուգներում:

Քրիստոնյա հոգևոր դասի կեսից ավելին՝ 722-ը (54,20%) բնակվում էր Կարսի, իսկ 462-ը (34,69%)՝ Կաղզվանի օկրուգներում: Հոգևոր դասի աննշան տոկոսը (6,61 և 4,50) բաժին էր ընկնում Արդահանի և Օլթիի օկրուգներին: Նշենք նաև, որ եթե Արևելյան Հայաստանի մնացած շրջաններում հայ Գրիգորյանները կազմում էին քրիստոնյա և ընդհանուր հոգևոր դասի մեծամասնությունը, ապա Կարսի մարզում ընդհանուրի կեսից էլ պակասը՝ 619 մարդ²⁴: Բավականին մեծ թիվ էր կազմում նաև մահմեդական հոգևոր դասը՝ 206 մարդ, 44-ն էլ այլ դավանանքի հոգևոր դասի ներկայացուցիչներ էին: Այսպիսով, ըստ ռուսական կայսրությունում 1897թ. անցկացված մարդահամարի տվյալների, դարի վերջին Կարսի մարզի հոգևոր դասի ընդհանուր թիվը կազմում էր 1582 մարդ, կամ բնակչության 0,54%-ը²⁵:

Ըստ Ռուսական կայսրությունում 1897 թվականին անցկացված մարդահամարի տվյալների՝ Ախալքալաքի գավառը միակ տարածաշրջանն է, որում հոգևոր դասի թվաքանակը 1886թ. համեմատ թեև աննշան, բայց ավելացել է՝ հասնելով 1292 մարդու (671՝ արական, 621՝ իգական սեռի)²⁶:

Արևելյան Հայաստանի մնացած շրջաններում մարդաշատ էր նաև Շուշիի գավառի քրիստոնյա հոգևոր դասը՝ 1184 մարդ (արական՝ 621, իգական՝ 563), որից 270-ը բնակվում էր Շուշի քաղաքում²⁷:

Հոգևոր դասը Շուշիի գավառում 80-ական թթ. հետ համեմատած կրճատվել է մոտ կիսով չափ: Շատ ավելի նվազել է Ջանգեզուրի և Ղազախի գավառների հոգևոր դասի թվաքանակը՝ կազմելով ընդամենը 859 և 325 մարդ²⁸: Նույն պատկերն է նկատվում նաև Բորչալուի գավառում, որտեղ քրիստոնյա հոգևոր դասի թիվը հասել է 838 մարդու²⁹: Գիշտ է, մահմեդական և այլ հոգևոր դասերն այս շր-

переписи, произведенной 28 января 1897 г., тт. I-II, СПб, 1905, с. 27. Первая всеобщая перепись ..., - LXXI, Эриванская губерния, с. 104.

²² Ըստ Խոջաբեկյանի՝ եղել է 4646 մարդ, որը չի համապատասխանում իրականությանը: Տե՛ս Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը, էջ 161:

²³ ПВІПНРИ, 1897 г., LXIV, тетрадь I, Карсская область, СПб, 1900, с. 32.

²⁴ ПВІПНРИ, Распределение населения по главнейшим сословиям, вероисповеданиям, родному языку и по некоторым занятиям, т. III, СПб, 1905, с. 27.

²⁵ ПВІПНРИ, Процентное распределение наличного населения империи обоого пола по группам занятий ..., նշված է 0,52% (տե՛ս էջ 17):

²⁶ ПВІПНРИ, LXIX, Тифлисская губерния, СПб, 1905, сс. 46-47.

²⁷ ПВІПНРИ, LXIII, Елисаветпольская губерния, СПб, 1904, с. 32.

²⁸ Նույն տեղում:

²⁹ Նույն տեղում, LXIX, Тифлисская губерния, СПб, 1905, с. 35.

ջաններում հաշվառված չեն, բայց նրանք փոքրաթիվ էին և էական փոփոխություններ չէին առաջացնի:

Արևելյան Հայաստանի հոգևոր դասի թիվը, տեղաբաշխումը և տոկոսային հարաբերությունները տվյալ շրջանի բնակչության նկատմամբ տրված է թիվ 2 աղյուսակում:

Աղյուսակ թիվ 2³⁰

Վարչական միավորները	1897թ.		
	բնակչ.	հոգևոր դաս	%
Երևանի գավառ	150.879	1.208*	0,80
Ալեքսանդրապոլի գավառ	165.503	1.572	0,95
Նոր Բայազետի գավառ	122.573	786	0,64
Էջմիածնի գավառ	124.237	1.478	1,19
Նախիջևանի գավառ	100.771	717	0,71
Սուրմալուի գավառ	89.055	452	0,51
Շ.Ղարալագյազի գավառ	76.538	318	0,42
ԸՆդ. Երևանի մահանգ	829.556	6.531 1.032**	0,91
		7.563	
Կարսի օկրուգ	134.142	722*	0,54
Արդահանի օկրուգ	65.767	88	0,13
Կաղզվանի օկրուգ	59.230	462	0,78
Օլթիի օկրուգ	31.519	60	0,19
ԸՆդ. Կարսի մարզ	290.654	1.332 250**	0,54
		1.582	
Զանգեզուրի գավառ	137.871	859	0,62
Ղազախի գավառ	112.074	325	0,29
Շուշիի գավառ	139.771	1.184	0,85
Ախալքալաքի գավառ	72.709	1.292	1,79
Բուրջալուի գավառ	128.587	838	0,65
ԸՆդ. Արևել. Հայաստանում	1.711.222	13.643	0,8

* Համապատասխան տվյալների բացակայության պատճառով մահանգի գավառներում և մարզի օկրուգներում հոգևոր դասի թվաքանակները տրված են առանց մահմեդականների:

** Ավելացված է ոչ քրիստոնեա հոգևոր դասին պատկանողների թվաքանակը:

Ընդհանուր առմամբ հոգևոր դասի թվաքանակն Արևելյան Հայաստանում կազմում էր 13.643 մարդ (առանց Ախալքալաքի, Զանգեզուրի, Ղազախի, Շուշիի և Բուրջալուի գավառների մահմեդական հոգևոր դասի) կամ բնակչության 0,8%-ը, ի տարբերություն մեկ տասնամյակ առաջվա 1,13%-ի:

Այսպիսով, XIX դարի 80-90-ական թվականներին հոգևոր դասն Արևելյան Հայաստանում ոչ միայն չի աճել, այլև նվազել է 1574-ով, այն դեպքում, երբ երկրի բնակչության աճը կազմել է մոտ 47,95%:

Կապիտալիստական հասարակության սոցիալական կառուցվածքի ուսումնասիրման ժամանակ հոգևորականությունը հաշվարկվում է մտավորականության կազմում:

Ըստ 1897թ. մարդահամարի տվյալների, Արևելյան Հայաստանում հոգևոր

³⁰ Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրների հիման վրա. ПБПНРИ, LXXI, Эриванская губерния, СПб, 1905, сс. 2, 30; LXIV, тетраль 1, Карсская область, СПб, 1900, с. 32; LXIII, Елисаветпольская губерния, СПб, 1904, с. 32; LXIX, Тифлисская губерния, СПб, 1905, сс. 35, 46-47.

դասի ընդհանուր քանակից ինքնուրույն զբաղմունք ունեին (ինքնագործներ էին) 2445-ը: Հոգևորականների կեսից քիչ պակասը՝ մոտ 46%-ը՝ բաժին էր ընկնում Երևանի նահանգին, 19,8%-ը՝ Կարսի մարզին, 12,11%-ը՝ Շուշիի գավառին, իսկ մնացած՝ 22,09%-ը՝ Ջանգեզուրի, Ղազախի, Ախալքալաքի և Բորչալուի գավառներին: Հոգևորականները կազմում էին Արևելյան Հայաստանի բնակչության (առանց զորքի՝ 1.675.686 մարդ) 0,15%-ը, իսկ ինքնագործների՝ ինքնուրույն զբաղմունք ունեցող բնակչության 0,8%-ը:

Հոգևորականների քանակը, տեղաբաշխումն ըստ դավանանքի՝ կազմված 1897թ. Ռուսական կայսրության առաջին մարդահամարի տվյալների հիման վրա, ներկայացված է թիվ 3 աղյուսակում³¹:

Աղյուսակ թիվ 3

Վարչական միավորները	Հայ գրիգորյան.	Ողղափառ. հոգևորակ.	Այլ դավ. հոգևոր.	Այլ հոգ. սպաս.	Ընդ.
Երևանի գավառ	134	20	71	18	243
Ալեքսանդրապոլի	203	11	10	18	242
Նոր Բայազետի	136	3	15	15	169
Էջմիածնի	164	7	41	7	218
Նախիջևանի	63	2	53	16	134
Սուրմալուի	28	5	20	1	54
Շ.Ղարալազյազի	30	2	27	3	62
Ընդ. Երևանի նահ.	758	50	237	78	1123
Կարսի օկրուգում	62	57	88	5	212
Արդահանի	4	24	102	3	133
Կաղզվանի	31	32	25	-	88
Օլթիի	6	10	34	-	50
Ընդ. Կարսի մարզում	103	123	249	8	483
Ջանգեզուրի գ.	104	3	56	1	164
Ղազախի գ.	44	2	59	7	113
Շուշիի գ.	161	18	96	21	296
Ախալքալաքի գ.	50	13	17	8	88
Բորչալուի գ.	62	65	46	6	178
Ընդ. Արևել. Հայաստ.	1282	274	760	129	2445

Ընդհանուր առմամբ Արևելյան Հայաստանում կրթության, գիտության, գրականության, արվեստի, առողջապահության, մասնավոր իրավաբանության բնագավառներում աշխատող մտավորականության ներկայացուցիչների ընդհանուր քանակը հասնում էր 3904 մարդու, որը կազմում էր Արևելյան Հայաստանի բնակչության (1.675.686 մարդ) 0,23%-ը, իսկ ինքնագործների (299.808 մարդ)՝ 1,30%-ը:

Հարկ է նշել, որ այս հաշվարկները կատարվել են առանց զորքի, որն Արևելյան Հայաստանի բնակչության օրգանական մասը չէր կազմում: Արևելյան Հա-

³¹ Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրների տվյալների հիման վրա. ПВПНРИ, Распределение населения по видам главных занятий..., т. III, СПб, 1905, сс.82-84, 94-95, 118-119, 126-127, LXXI, Эриванская губерния, СПб, 1905, с. 1, LXXIV, Карсская область, тетрадь I, СПб, 1900, с. 1, Елисаветпольская губерния, т. LXIII, СПб, 1904, с. 1, Тифлисская губерния, т. LXIX, СПб, 1905, с. 1.

յաստանում, որպես սահմանամերձ շրջան, կենտրոնացված էր մեծ թվով զորք՝ 35.536 մարդ, որը կազմում էր բնակչության 2%-ից ավելին, իսկ ինքնագործների՝ 11,85%-ը: Կարսի մարզում զորքը կազմում էր բնակչության արդեն 6,4%-ը, իսկ ինքնագործների՝ 27,24%-ը: Պարզ է, որ զորքի նման թվաքանակի պայմաններում, առանց այն օտարելու հաշվարկներ կատարելիս, չենք կարող ստանալ Արևելյան Հայաստանի բնակչության դասային բաժանման, տվյալ դեպքում հոգևոր ինքնագործների, նրանց տեսակարար կշռի օբյեկտիվ պատկերը:

Այսպիսով՝ Երևանի նահանգում 1865 թվականին, վիճակագրական կոմիտեի տվյալներով, հոգևոր դասի ընդհանուր թվաքանակը հավասար էր 4839-ի, որը կազմում էր բնակչության մոտ 2%-ը: Հայ լուսավորականները կազմել են հոգևոր դասի բացարձակ մեծամասնությունը՝ 42% (3484 մարդ):

1886 թ. ընտանեկան ցուցակագրության տվյալների համաձայն հոգևոր դասի թվաքանակը Երևանի նահանգում արդեն կազմում է 7707 մարդ, սակայն նվազում է նրա տեսակարար կշիռը՝ 1,15%: Հոգևոր դասի ընդհանուր թվաքանակում աճել է հայ Գրիգորյանների տեսակարար կշիռը՝ կազմելով ընդհանուրի արդեն 87,47%-ը (6741 մարդ): Արևելյան Հայաստանում հոգևոր դասի թվաքանակը կազմել է 15.217 մարդ կամ բնակչության 1,13%-ը:

Դարի վերջում Երևանի նահանգի հոգևոր դասի թվաքանակը նվազել է՝ 7563 մարդ, որն արդեն կազմել է բնակչության 0,9%-ը: Նվազել է նաև Արևելյան Հայաստանի հոգևոր դասի թվաքանակը՝ 13.643 մարդ, որն էլ կազմել է բնակչության ընդամենը 0,8%-ը: Հոգևոր դասի ընդհանուր թվաքանակում շարունակում էր աճել հայ հոգևոր դասի տեսակարար կշիռը՝ կազմելով արդեն մոտ 80%:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍԸ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԻՆՔՆԱԳՈՐԾՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Գ. Լ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

XIX դարի երկրորդ կեսին Արևելյան Հայաստանի բնակչությունը շարունակում էր բաժանված մնալ դասերի, որոնց իրավունքներն ու պարտականություններն ամրագրված էին օրենսդրությամբ, որոնց թվում էր և հոգևոր դասը: Դարի 60-ական թվականների համեմատությամբ 80-ական թթ. հոգևոր դասի թվաքանակն Արևելյան Հայաստանն ընդգրկող Երևանի նահանգում, Ջանգեզուրի, Ղազախի, Շուշիի, Ախալքալաքի և Բորչալուի գավառներում ավելանում է՝ հասնելով 15.217 մարդու, որը կազմում էր ընդհանուր բնակչության 1.345.405 մարդ, 1,13%-ը: Նշված ժամանակահատվածում Կարսի մարզի հոգևոր դասի վերաբերյալ տվյալներ չունենք:

90-ական թվականներին հոգևոր դասն Արևելյան Հայաստանում բնակչության շարունակական աճի պայմաններում գնալով քանակապես նվազում է, և 1897 թվականին, ներառյալ նաև Կարսի մարզը, կազմել է ընդամենը 13.643 մարդ կամ ընդհանուր բնակչության 0,8%-ը:

ДУХОВЕНСТВО И ДУХОВНЫЕ САМОДЕЯТЕЛИ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIX ВЕКА

Г. Л. КИРАКОСЯН

Во второй половине XIX века население Восточной Армении было разделено на классы. Права и

обязанности этих классов были закреплены в законодательстве. По сравнению с 60-ыми годами века в 80-ые годы в Эриванской губернии и в Зангезурском, Казахском, Шушинском, Ахалкалакском, Борчалуйском уездах Восточной Армении численность духовенства растет, достигая 15217 человек, что составляла, 1,13% всего населения (1345405 человек). Данные о духовном сословии Карсской области в упомянутом периоде не имеются.

В 90-ые годы, при условиях непрерывного роста численности населения в Восточной Армении, духовенство постепенно количественно уменьшалось, и в 1897 году составляло 13 643 человек, или 0,8% всего, в том числе и Карсская область.

THE RELIGIOUS CLASS ARMENIA AND THE RELIGIOUS AMATEURS OF THE EASTERN IN THE SECOND HALF OF THE XIX CENTURY

G. L. KIRAKOSYAN

In the second half of the 19th century, the population of Eastern Armenia continued to be divided into classes, whose rights and duties were enshrined in legislation, including the religious class. In comparison to the 60s, in 80s the number of religious class in provinces Zangezur, Kazakh, Shushi, Akhalkalaki and Borchaly of Eastern Armenia grew becoming 15,217 people, which was 1.13% of all the population (1.345.405 people). There is no any data about the religious class of the Kars province in the definite period of time.

The religious class of the Eastern Armenia became smaller in 90s, despite the growth of the population and in 1897 it was only 13.643 people (0.8% of all the population) including Kars province.

ԷԹՆԻԿ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԱԲԱՂՅԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԻ ԺԱՄԱՆԱԿ¹ (ԳՅՈՒՂԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԻ ԴԵՊԶԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ)

Ա. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

*Պատմական գիտությունների թեկնածու,
ԳՊՀ պատմության ամբիոնի դասախոս*

Խորհրդային Միության վերջին տարիները և հետխորհրդային ժամանակաշրջանը, ի թիվս քաղաքական, սոցիալական, տնտեսական ճգնաժամների, ուղեկցվեցին նաև բազմաթիվ կոնֆլիկտներով, որոնց անբաժան մասն է հանդիսանում «փախստականություն» երևույթը: Կովկասյան ռեգիոնում, կապված բազմաթիվ

¹ Հոդվածը պատրաստվել է գերմանական Հ. Բյուլի անվան հիմնադրամի «Քաղաքացիական նախաձեռնությունը Հարավային Կովկասում հայկական և ադրբեջանական բնակչության տարաբաժանման գործընթացում. Քերքենջ և Ջյունաշոլ գյուղերի փոխանակման օրինակով» հետազոտական ծրագրի նյութերի հիման վրա: